28. ԳԱՌՆՈՒԿ ԱԽԲԵՐ

Կէղնի չէղնի իրիկրմ ու կնիկրմ։ Կնիկ կմեռնի, կմնան ուրեն էրկու ճիժ գետին։ Կէրթա ուրեն ուրիշ կնիկրմ կբերե։

Կնիկն է, օր կիդա, կբերե ցորեն խարկե, կըլնա փեթկի մեջ, մարդ կվերցու տանե ցանե, չբուսի։

Կդառնա կիգա, կնկան կասե.— Կնիկ, ես տարեր եմ մըր հ'արտ ցորեն ցանի, չբուսեր է, էն օր հ'իսնե հանգան ցաներ է, բուսեր է, հ'որի՞ չբուսեր է։

Կնիկ կդառնա կասե.— Հայուկ, օր ասեմ, հըմկա կասիս դու տամառի է, կպատռի իմ ճժերուց։ Հ'էսօր գիշեր ընծիկ էրազ էկավ, ասաց՝ զուր ճժեր տանե մեկն արտի մեկ գլուխ, մեկ լե մեկ գլուխ մատղե, հանդե կբուսի։

Իրիկ կավտընա, կընկա խաբուկ է, կասե կընկան.—Կնիկ, դրպ օր դու հըմալ կասիս, էրե քասով ճըմուռ ճըժերուն, թըղ ուտեն, ճամբե հ'իգան հ'արտ՝ իմ խեչ։

Կնկա հ'ուզածն էլ էդ էր։ Կբերե քասով ճըմուռ կէնե, կիտա տղին ու աղջկան, կուտեն, կճամբե կէրթա։ Քիչ մը լե ճըմուռ կառնեն, ուրանց պապուն կտանեն ճժեր։

Օր կտանեն, ճամբու հետ ճնճուղրմ ռաստ կիգա քուրն ու ախբոր։

Կասե.—Բըրդուճրմ ճըմուռ տվեք ընծիկ, ուտեմ, ձըզիկ բարի խոսքըմ ասիմ։

Քուր չի տա։ Ախբերն կասե.—Աստված օր կսիրես, բըրդուճրմ թալ, տեսնանք ի՞նչ կասե։

Քուրն է, օր բրրդուեՃրմ կթալե, ՃընՃուղ կասե.— Հանդե կէրթաք հ՝արտ, մուխյաթ մանցեք Ճրզիկ, ձեր հեր միտկ դրեր է մորթե ՃրզիկԻ Դուք մրհանա կէնեք. մեկդ կթռու զքուրոջ յազմեն, քուր լե զախբոր, արախՃին, կփախնեք էրթաք։

ՃընՃղու ասածի պես կէնեն։ Եբ կէրթան հ՝արտ, հեր ուրանց օր կհասնի մորթե, կփախնեն կէրթան։

Ախբեր կծարվրնա, կիգա կտեսնե օր գիլու օտաց տեխ պրրընՃեր է ու ջուր էկեր է, քոմի մեջ։ ԿգրՃի վրեն օր խմե, քուր չթողե։ Կասե.— Օր խմիս, հանդե կէղնիս գել։

Հոնկուց կընցնին, կէրթան։ Ջիու օտաց տեխի մը ռաստ կիգան, մեկ լե չթողե խմե։ Կասե.—Կէղնիս ձի։

Հոնկուց ջորու օտաց կիգա, չթողե խմե։ Կասե.— Կէղնիս ջորի։

Դավրու կիգա, չթողե, կասե.— Կէղնիս դավար։ Կիգա գառան օտաց տեխեն ըռաստ, կտեսնա օր պրրընՃեր է, անձրև էկեր է, լցվի մեջ։

Կասե.— Քուրիկ, ծարվուց մեռա, էլ չըմ կրռնա դիմանա։

Քուրն կասե.— Մեղք քու վիզ, դրհ խմե։

Կխմե, կդառնա գառ։ Կխըմե, չխըմե, կդառնա գառրմ, կպոռալրռա ու կընկնի քուրոջ հ՝ետևեն։ Քուրն է, ջանգարդի կէղնի, կիջու զմեզրի թել, կկապե գառնուկ ախբոր վիզն ու կքաշե, կտանե։ Կէրթան, ռաստ կիգան ծառու, մը, ախչիկ կելնի ծառու գլուխ, գառ կմնա կապուկ ծառու տակ։

Թագավորի տղեն կիգա, զձիանք կբերե վրը ջրին, ինչ կէնեն ջուր չխմեն, կխըռտան, գառնան ետ, մեկ լե կիշքե, օր շաՃխրմ կա ջրի մեջ։ Կվերցու ըզգլուխ վի, կիշքե օր հուրնի հրեղեն ախչիկրմ նստուկ է ծառու գլուխ։ Հրաման կէնե, կէլնեն կիջուն ցած։

Կտանե պսակե վրը ուրեն։

Եբ կպսակվին կփրցնին, իրկան կասե.— Մեկ հիվի մը ունիմ քենե։ Իմ հիվին էն է, օր էդա գառ իմ հ՝օդի միջից չթողիս դուրս հ՝ելնի։

Խորթ մեր կհասկնա, օր ուր ախչիկ գացեր է, առեր է ղթագավորի տղեն։ Կէրթա, կասե թագավորի տղին.—Ջիս բեսլամա չբրռնե՞ս։

Կնիկն կհասկնա, օր ուր տամառի մամն է, էրկան կասե՝ մը բոնի։

Ինչ կէնե, չէղնի վրեն, չկառնա։

Կբռնե պար-դաստի կնկա հ՝առեջ։

Օր մը կտանե, օր թագավորի տղի կնկա գլուխ լրվանա։ Կհրլոտե, կիտա ծովու մեջ, ուրեն լե քրռնուկ ախչիկրմ կեր, կհագու շորեր վրեն, կտանե թագավորի տղին, կասե՝ բերի զքու կնիկ։

Ախչիկ լե թանգ ու ազիզ, կտրքտրքա, նազրմ կէնե վրը թագավորի տղին, աստված նշանց չի տա։

Էդ ախչիկ քանի մը օր զինկ կդնե սուտ հիվընդութեն։ Կասե.— Ջէգա գառ չմորթես, ես չըմ սաղնա։

Էդ օր կասե զդառ մորթես ընծիկ, թագավորի տղի կնիկ կիմնա, կիգա կէլնի վըր քարի մը կնստի։ Կիշքե օր ժամկոչ էկավ, զժամ կկանչե։ Կասե.

—Ժամկոչ, ժամկոչ,
Զքու ժամն օր կսիրես,
Էրթաս ասիս
Թագվոր օրթուն,
Զեռնիկ թուլնա,
Դանկիկ գուլնա,
Տակմիշ չէղնի,.
Իմ գառնուկ ախբոր։

Ժամկոչ կիշքե, կասե՝ էդ ի՞նչ ձեն է։ Կուշտ ու բոլոր կիշքե, կտեսնա օր ծովու մեշ ախչիկըմ հ՝ելեր է վըր քարուն ու յալվարմիշ կէղնի ուրեն։

Կէրթա կասե թագավորի տղին։ Թագավորի տղեն կիգա կտեսնա օր, օղորդ է. լողվորդներ կկանչե բերե հանել կիտա։

Ախչիկն օր կէլնի դուրս, կասե.— Յամա՞ն, ձըր բախտն եմ հ՝ընկի, ես տըկլող իմ, գացեք մեկդին, հար հալավ բերեն հագնեմ։

Թագավորի տղեն կվերցու զուր պանամշեն, թալե վըր կնկան, կառնե կիգա տուն։ Նոր կնիկ զուր գլխու գալած կպատմե էրկան։

Կբռնեն զէն կնիկն ու զուր ախչիկ ֆիու պոչ կկապեն։—Ձի, կտանես սար կզարկիս, քար կզարկիս, անատակ ծովերու տակ կցողվիս զքու պոչ, կիգաս,— կասեն։

Ձին էնդոնց ասածի պես կէնե, դառնա, կիգա։

Նոր ախչիկն ու տըղեն ֆարաղաթ էղան, կերան, խմին ու ուրանց քեֆին կիշքեն։